ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՄԻԱՑՄԱՆ
150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1783 Թ. ԳԵՈՐԳԻԵՎՍԿԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

XVIII դ. 80-ական թվականներին Անդրկովկասը դարձել էր Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի մրցակցության ասպարեզ։ Դրանով է բացատրվում այն հետաքրքրությունը, որ դրսևորում էր ռուսական դիվանագիտությունը դեպի Վրաստանը[1]*։ Այս շրջանում հաճախակի էին դարձել ռուս պաշտոնյաների, դեսպանների և «ճանապարհորդների» այցելությունները Հերակլ II-ի արքունիք։ Այդ այցելությունների նպատակն էր պարզել, թե ինչ պայմաններով է հնարավոր Վրաստանը ներքաշել Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականության մեջ։*

Վրաց առաջադեմ պետական գործիչներն իրենց հերթին համոզված էին, որ Ռուսաստանի և Վրաստանի քաղաքական շահերը համընթաց են, հետևաբար, Ռուսաստանի հովանավորության ներքո անցնելը բարենպաստ կլիներ Վրաստանի համար։ Քաղաքական անկախությունից հրաժարվելու և իր երկրի բախտը Ռուսաստանի հետ կապելու միջոցով Հերակլ II-ը միտում էր իր ժողովրդին առհավետ ղերծ պահել Թուրք-պարսկական լծից։ Այդ է վկայում 1774 թ. օգոստոսի 24-ին Ն. Պանինին նրա հղած նամակը։ Այնտեղ մասնավորապես կարդում ենք. «Թուրքերը օձի պես իրենց երախները բացած շրջապատել են մեզ, պարսիկները ամեհի առյուծների նման են մեզ նայում, իսկ լեզգիները սրում են իրենց ատամները մեր դեմ՝ քաղցած գայլերի պես»[2]*։*

1782 թ. դեկտեմբերի 21-ին Հերակլ II-ը, ռուսական կառավարության ցանկության համաձայն, Եկատերինա II-ին խնդրեց Ռուսաստանի հովանավորության տակ վերցնել իրեն և իր երկիրը։ Հարկ է նշել, որ Հերակլ II-ը տակավին 1771 թ. ռուսական արքունիք էր ներկայացրել այն պայմանները, որոնցով նա կամենում էր ընդունել ռուսական հովանավորությունը[3]*։ Այժմ ևս նա ներկայացնում էր 1771 թ. առաջադրած պայմանները, դրանց ավելացնելով նոր կետեր։ Վերջիններիս ավելացումը պայմանավորված էր 1771 թ. համեմատությամբ փոփոխված հանգամանքներով։ Իր պայմանների առաջին կետով Հերակլ II-ը խնդրում էր, որ Ռուսաստանը դիվանագիտական ճանապարհով Վրաստանին ղերծ պահի Պարսկաստանի և Թուրքիայի ոտնձգություններից, իսկ պատերազմի դեպքում հանդես գա Վրաստանի պաշտպանի*

---

[1] Ն. Ծերժենիշվիլի, საქართველოს ისტორიის საკითხები, თბ., 1973, ტ. VI, էջ 455։

[2] О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке. М., 1966, стр. 168—169.

[3] *Այդ պայմանները Պետերբուրգ էր տարել Հերակլ II-ի որդի Լևանը, որի շքախմբի կազմում էին ավագ դպրապետ հայազգի իշխան Սուլխան Բեգթաբեգյանը և ազնվական Խաչատուր Մարտիրոսյանը։ Նկատենք, որ սա Ս. Բեգթաբեգյանի երկրորդ ուղևորությունն էր Պետերբուրգ։ Առաջին անգամ նա այնտեղ էր մեկնել 1761 թ. Թեհմուրազ արքայի շքախմբում։*

դերում։ Փոխարենը Հերակլ II-ը պարտավորվում էր իր ողջ ուժն ի սպաս դնել Ռուսաստանին՝ Անդրկովկասում վերջինիս շահերը պաշտպանելու համար[4]։ Այսպիսով, «առաջին իսկ հոդվածով Հերակլ II-ը ձեռնոց էր նետում Վրաստանի դարավոր ոսոխներին՝ Պարսկաստանին և Թուրքիային, իր և ժառանգների անունից հայտարարելով, որ ինքը «հանդիսավոր կերպով ընդմիշտ հրաժարվում է Պարսկաստանից կամ որևէ այլ տերությունից վասալական կամ այլ տիտղոսով կախվածություն ունենալուց և ի լուր ողջ աշխարհի հայտարարում էր, որ ինքը չի ճանաչում իր և իր հետնորդների նկատմամբ որևէ այլ գերիշխանություն, բացի նորին գերազանցության (ռուսական կայսրուհու—Վ. Մ.) և նրա բարձր ժառանգների ու հետնորդների գերազանցությունը և հովանավորությունը»[5]։

Այնուհետև, Հերակլ II-ը խնդրագրում նշում էր Թեհմուրազ արքայի և անձամբ իր ավանդը Քարթլին պաշտպանելու-շենացնելու գործում և խնդրում, որ ռուսական կառավարությունը պաշտոնապես ճանաչի Հերակլ II-ի և նրա հետնորդների՝ Քարթլիին առհավետ տիրելու իրավունքը[6]։ Վեցերորդ կետով նա խնդրում էր, որ մշտապես Վրաստանում գտնվելու պայմանով երկրում ռուսական երկու զորագունդ տեղակայվեր։

Ռուսաստանի և Վրաստանի միջև դաշնագիրը կնքվեց 1783 թ. հուլիսի 24-ին՝ Գեորգիևսկ ամրոցում։ Այն Քարթլ-Կախեթի թագավորության կողմից ստորագրեցին Իոանե Մուխրանբատոնը և Գարսևան Ճավճավաձեն, իսկ ռուսական կառավարության անունից՝ գեներալ-պորուչիկ Պ. Պոտյոմկինը։

Դաշնագիրը բաղկացած էր նախաբանից, 13 հիմնական և 4 առանձին (գաղտնի) հոդվածներից։ Եթե պայմանագրի հիմնական հոդվածները վերաբերում էին այն պայմաններին, որոնցով արևելավրացական պետությունը անցնելու էր Ռուսաստանի հովանավորության տակ, ապա 4 առանձին հոդվածները նախատեսում էին ռազմական այն օգնությունը, որ անհրաժեշտության դեպքում Ռուսաստանը պիտի ցույց տար Քարթլ-Կախեթի թագավորությանը։ Դաշնագիրն ուժի մեջ մտավ վավերացման հրովարտակները փոխանակելուց հետո, որ տեղի ունեցավ 1784 թ. հունվարի 24-ին՝ Թիֆլիսում։

Այժմ տեսնենք, թե ինչ առնչություն ունեին հայ ազատագրական շարժման գործիչներն այդ պայմանագիրը կյանքի կոչելու հետ և թե ինչպիսին էր

---

4 Ուշագրավ է այն, որ Սիմեոն Երևանցին 1775 թ. փետրվարին վրաց Անտոն կաթողիկոսին հղած նամակի մասին իր օրագրում գրել է. «Եւ զի արքայն վրաց Հերակլէս ի ՌՄԻ թուոջն (1771) վասն հարկաւոր խնդրոց ոմանց՝ զորդին իւր զԼեւան միրզայն և զսա (Անտոն վրաց կաթողիկոս—Վ. Մ.) առաքեաց առ թագաւորն ռուսաց Եկատերինէն։ Որք յայսմ ամի (1775 թ.—Վ. Մ.) վերադարձեալ անտի եկին ի քաղաքն (Թիֆլիս—Վ. Մ.)։ Վասն որոյ և շնորհաւորութիւն գրեաց սմա, Զոր ընդ նոյն գրաբերին յղեցաք» («Դիվան հայոց պատմության», գիրք Ը, Թիֆլիս, 1908, էջ 333)։ Այս տողերը հիմք են տալիս ենթադրելու, որ Սիմեոն Երևանցին ուշի-ուշով հետևում էր ռուս-վրացական առնչությունների ընթացքին, անտարակույս, որոշակի հույսեր կապելով վերը նշված դեսպանաղնացության հետ։

5 О. П. Маркова, նշվ. աշխ., էջ 168—169։

6 Հարկ է նշել, որ խնդրագրի այս կետն ավելացվել էր այն պատճառով, որ հենց այդ ժամանակ Անդրկովկասի տարբեր իշխողների մոտ ապաստան էր գտել Բաքարի որդի Ալեքսանդրը, որ Քարթլիի գահին տիրելու հավակնություն էր դրսևորում (ნ. ბერძენიშვილი, նշվ. աշխ., էջ 457—458)։

Քարթլ-Կախեթի թագավորության մեջ բնակվող հայության վերաբերմունքը դրա կնքման նկատմամբ։ Հարկ է նշել, որ Գեորգիևսկի պայմանագիրն Անդրբրկովկասի, Պարսկաստանի և Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի XVIII դ. 80-ական թվականների ընդհանուր քաղաքականության մի կարևոր մասն էր։ Այդ ծրագրի այլ մասն էր կազմում հայ պետականության վերականգնումն Արևելյան Հայաստանի ողջ տարածքում։

Հայ պետականությունը վերականգնելու խնդիրը XVIII դ. 80-ական թվականներին ռուս պետական և հայ ազատագրական շարժման գործիչները քանիցս քննարկել էին, և նույնիսկ Ռուսաստանի ու ապագա հայկական պետության միջև կնքվելիք ռուս-հայկական ռազմաքաղաքական դաշինքի նախագծեր էին հրապարակ եկել[7]։

Արևելյան Հայաստանում հայկական պետության վերականգնման խնդրի արծարծումը, որին իրերի նպաստավոր ընթացքի դեպքում պիտի միացվեր նաև Արևմտյան Հայաստանը, մեծապես ոգևորել էր նաև Քարթլ-Կախեթի հայությանը, որը բազմաթիվ կապեր ուներ մայր հայրենիքի հետ։ Վիրահայությունը, որ կազմում էր Քարթլ-Կախեթի ազգաբնակչության գրեթե մեկ հինգերորդը[8] և հիմնականում քաղաքաբնակ տարրից բաղկացած լինելով՝ իր զբաղմունքի բերումով կապված էր Ռուսաստանի, մասնավորապես Հյուսիսային Կովկասի շուկաների հետ, լիովին հարեց Ռուսաստանի հովանավորության ներքո անցնելու կողմնակիցների բանակին։

Քարթլ-Կախեթի և մասնավորապես Թիֆլիսի հայությունը ոգեշնչված հայ պետականության վերականգնման հեռանկարով, գնալով ավելի էր համոզվում, որ միայն հզոր Ռուսաստանն ի վիճակի կլինի Վրաստանն ու Հայաստանը զերծ պահել թուրք-պարսկական լծից։ Թիֆլիսի հայերից իրենց ռուսասիրությամբ աչքի էին ընկնում քաղաքի մելիք—տանուտեր Դարչի Բեհբությանը, Հերակլ II-ի արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաներ Սուլխան Թումանյանը[9], նրա եղբայր Մանուչարը և վերջինիս որդի Շիոշը, Սողոմոն Արղությանը, Հովսեփ Բեհբությանը և Հովսեփ Ղորղանյանը, որը թագուհի Դարեջանի գործերի կառավարիչն էր։ Սրանք բոլորն էլ մեծ կշիռ ունեին վրաց արքունի ռուսասեր խմբավորման մեջ։ Նրանց հավաքատեղին էր Հ. Բեհբությանի տունը։ Այս խմբավորման գլուխ կանգնածները մշտական կապ ունեին

---

7 Այդ նախագծերի մասին տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, Թ. Ավդալբեկյան, Հայ ազատագրական շարժման երկու հոսանք XVIII դարի վերջում («Նորք», գիրք 1, Երևան, 1922), Ա. Մնացականյան, XVIII դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջը («Բանբեր Մատենադարանի», № 4, 1958), Վ. Ա. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, Զ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947; М. Г. Нерсисян, Из истории русско-армянских отношений, Ереван, 1956 և այլն։

8 Ն. გაგაბაძე, საქართველოს ისტორია, ტფ., 1923, էջ 205։

9 Գեորգիևսկի դաշնագիրը վավերացնելու խնդիրը ռուսական կառավարության հետ համաձայնեցնելու նպատակով Հերակլ II-ը Պետերբուրգ էր ուղարկել հայազգի իշխան Սուլխան Թումանյանին։ Այդ առթիվ Հ. Արղությանը 1783 թ. հոկտեմբերի 11-ին Մարդար Մանուչարյանին, որը Պետերբուրգի ազդեցիկ հայերից էր, գրել է. «արքայն Հերակլէս վասն օծութեան հրաման առնելոյ մերազնեայ քնեազ Սուլխան դիւանն Թումանեանն առաքեալ է առ քնեազն (նկատի ունի Գ. Ա. Պոտյոմկինին—Վ. Մ.) գնաց աստ, եթէ յայդր հանդիպի, խնդրեմ սէր ցուցանել յատուկ...» (Մատենադարան, ձեռ. № 4496, թ. 191)։

Հ. Արղությանի հետ։ «Մեծ էր ռուսասեր այս խմբավորման ազդեցությունն արքունիքում և պետական գործերի ընթացքի վրա»,— նշում է Ս. Կակաբաձեն[10]։ «Ընդհանրապես քաղաքական կողմնորոշման խնդրում այդ ժամանակ Վրաստանում կարծիքների մեծ այլազանություն կար։ Վրաց ֆեոդալների մի մասը Հերակլի հետ միասին հանդես էր գալիս դեպի Ռուսաստանը կողմնորոշվելու օգտին։ Ռուսաստանի կողմնակիցների դասին էին պատկանում նաև Վրաստանի ֆեոդալական հասարակության հայկական մասը և հայ մեծահարուստ վաճառականները»[11],— գրել է ակադ. Ն. Բերձենիշվիլին։

Հայ-ռուսական առնչությունների առումով Հ. Արղությանի գործունեությունը բավականին լուսաբանված և պատշաճ գիտական արժեքավորման է ենթարկված։ Անհամեմատ սակավ է լուսաբանված նրա դերը ռուս-վրացական և հայ-վրացական առնչություններում, մասնավորապես Գեորգիևսկի դաշնագրի կնքման հարցում։ Նկատի ունենալով այս հանգամանքը, հարկ է փոքր-ինչ հանգամանալից ծանրանալ այդ խնդրի վրա։ 1784 թ. փետրվարի 20-ին Ա. Սամուելովին հղած նամակում Հ. Արղությանը նշում էր. «զանազան գրուածովք իմովք կակղասցի զսիրտ վրաց արքային, որպէս նորին գրեանքն, որ առ մեզ հաւաստի առնեն զասացեալսն և շնորհակալութիւն մեծ մատուցանէ մեզ որպէս աշխատանք մեր յայտնիք են և Պաւլ Սերգէյիչն և գերազանցութեան քում...»[12]։ Այս վկայությունը եզակի չէ և հավաստվում է մեկ այլ փաստով։ Հ. Արղությանը 1783 թ. հոկտեմբերի 1-ին Նոր Նախիջևանից Մ. Լազարյանին գրում է. «յայսմ ամի ես մեծապէս եմ աշխատեալ վասն թագաւորութեանս ի բանս վրացոց և մեր երկրի, համարեա թէ ամենայն ինչ ըստ դրելոցն իմոց եղև։ Երկու անգամ յատուկ գիր է դրեալ և մեզ խնդրեալ Պաւլ Սերգէյիչն վասն այս բանիցս շնորհակալութեան գրով և բանիւ մատուցեալ առ մեզ»[13]։ Այս քաղվածքը ևս ակնհայտ է դարձնում Հ. Արղությանի եռանդուն մասնակցությունը հիշյալ դաշնագրի նախապատրաստման և կնքման գործին։ Դրանից զատ, Հ. Արղությանի սույն տողերը բացահայտում են նրա գործելակերպը և նպատակամղումները։ Պարզվում է, որ հոգալով Վրաստանի՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական հովանավորության ներքո անցնելու խնդրի մասին, Հ. Արղությանն այն չէր անջատում իր հայրենիքը օտար լծից ազատելու խնդրից, որին նա բոլորանվեր ծառայում էր վաղուց ի վեր։ Բերենք Գեորգիևսկի դաշնագրի կնքման գործում Հ. Արղությանի եռանդուն մասնակցությունը հավաստող մեկ այլ վկայություն ևս. «Պաւլ Սերգէյիչ Պոտէմկինն յաղագս վրաց բանիցն կրկին խնդրեալ էր զմեզ ի գալ դեսպանաց նոցա, ուստի և մեր գնացեալ առ նա հոգացեալ եղև բանն վրաց և դաշանացն ձեռք եդեալ երկուց կողմանց առեալ գնացին և եղեն յաւիտեան բախտաւորք»[14],— գրել է Հ. Արղությանը՝ Հ. Լազարյանին հղած նամակներից մեկում։ Այնուհետև նա շարունակում է. «Մարտէն սկսեալ մինչև յօգոստոսի վերջն առ նա եմ լեալ և շաղկապն թագաւորական շահաւէտ բանս եմ հոգացեալ, համարեա թէ զսիրտն վ;աց արքայի մերով գրուածովն շրջեցաւ առ

---

[10] ს. კაკაბაძე, նշվ. աշխ., էջ 284

[11] ნ. ბერძენიშვილი, նշվ. աշխ., էջ 463։

[12] Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4496, թ. 207—208։

[13] Նույն տեղում, թ. 176։

[14] Նույն տեղում, թ. 173—174։

ռուսաց...»[15]։ Հ. Արղությանի նամակից բերված այս տողերը պարզաբանման կարիք ունեն։ Բանն այն է, որ «հակառակ ռուսական դիվանագիտության ակնկալություններին, Հերակլ արքան հապաղում էր պայմանագիրը ստորագրելու համար լիազոր ներկայացուցիչներ ուղարկել։ Այդ պատճառով նրա մոտ ուղարկվեց փոխգնդապետ Վ. Ս. Տամարան, որին Պ. Ս. Պոտյոմկինը հանձնարարել էր խորամուխ լինել արքայի «իրական զգացմունքներում»[16], այսինքն՝ պարզել հապաղման պատճառը։

Ինչպես հայտնի է, «Ղրիմը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ մանիֆեստի հրապարակման (1783 թ. ապրիլի 8) և Թուրքիայի հետ այդ իրողությունը վերջինիս կողմից ճանաչելու մասին համաձայնագիր կնքելու միջև ընկած ժամանակահատվածը խիստ լարված էր, սպասվում էր, որ պատերազմը անխուսափելի է»[17]։ Ակամայից ռուս-թուրքական պատերազմի մեջ ներքաշվելու մտավախությունն էր, որ Հերակլ II-ին հարկադրում էր հապաղել։ Ահա թե ինչու հարկ եղավ Հ. Արղությանին ևս մասնակից դարձնել «Հերակլին համոզելու» առաքելությանը։ 1796 թ. Հ. Արղությանը Պ. Զուբովին գրել է. «Նորին պայծառության հրամանով (Գ. Պոտյոմկինի.— Վ. Մ.) ես բոլոր ջանքերը գործադրեցի վրաց արքային համոզելու, որ նա ընդունի հովանավորությունը (Ռուսաստանի—Վ. Մ.)»[18]։ Այս կապակցությամբ Օ. Մարկովան գրում է, որ «Կովկասյան գործերի վիճակին Գ. Ա. և Պ. Ս. Պոտյոմկիններին իրազեկ էր դարձնում արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը։ Գ. Ա. Պոտյոմկինի խնդրանքով նա ուղեկցում էր Պ. Ս. Պոտյոմկինին դեպի իր շտաբ-բնակարանը, որը գտնվում էր Գեորգիևսկում»[19]։

Այսպիսով, ակնհայտ է, որ Հ. Արղությանը գործուն մասնակցել է Գեորգիևսկի դաշնագրի նախապատրաստման և կնքման հույժ կարևոր գործին։ Հետևաբար, միանգամայն իրավացի է Ն. Տարսաիձեն, գրելով, որ Հ. Արղությանը նպաստել է Ռուսաստանի և Վրաստանի միջև 1783 թ. պայմանագրի կնքմանը[20]։

Տարիներ անց՝ 1798 թ. սեպտեմբերի 9-ին, Հ. Արղությանն իր եղբոր որդուն՝ Սողոմոնին, գրած նամակում բացահայտել է իր գործելակերպի դրդապատճառները։ Ահա թե ինչ է գրել նա. «...որպէս խօսեցեալ եմ ընդ արքայորդի Դաւիթն, եթէ ոչ է մոռացեալ զայնս, զի իմ կամքն է ծաղկեցուցանել զդոսա (Քարթլ-Կախեթի թագավորությունը—Վ. Մ.) և կոչել ոչ միայն թագաւոր վրաց, այլև հայոց»[21]։ Բերված քաղվածքը կարևոր է ոչ միայն նշված դաշնագրի կնքմանը Հ. Արղությանի աջակից լինելու, այլև այն առումով, թե ի՞նչ տեսանկյունից էին մոտենում հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչները Վրաստանի հզորացման խնդրին։ Ուշագրավ այդ տողերը բացահայտում են այն մտայնությունը, որ գերիշխող էր հայ ազատագրական շարժման գործիչների վարքագծում, այն է հայկական պետականության վերականգնում՝ հայ-վրացական միացյալ թագավորության կամ թե

---

15 Նույն տեղում, թ. 174։

16 О. П. Маркова, նշվ. աշխ., էջ 167—168։

17 Նույն տեղում, էջ 168։

18 „Սաօսէտրօօ ցուամնց", 1945, № 1, էջ 28։ О. П. Маркова. նշվ. աշխ., էջ 168։

19 Նույն տեղում, էջ 165։

20 Н. Г. Тарсаидзе, Исторические этюды, Тбилиси, 1972, стр. 41.

21 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2951, թ. 214—215։

հայկական առանձին պետականության տեսքով, նայած թե քաղաքական հանգամանքները դրանցից որի օգտին էին զարգանալու։

1792 թ. փետրվարի 2-ին Եկատերինա II-ին ներկայացվել է մի խիստ ուշագրավ խնդրագիր, որտեղ արծարծված հարցերը մեծապես աղերսվում են 1780 թ. հունվարի 10-ին Հ. Լաղարյանի կողմից Ա. Սուվորովին ներկայացված «պարոն Իվան Լաղարևի հուշագիր» անվանումը ստացած վավերագրում առաջ քաշված խնդիրների հետ։ Անկախ այն բանից, թե ով է հիշյալ խնդրագրի հեղինակը (մեր կարծիքով հեղինակը Հ. Լաղարյանն է), անտարակույս, նա հայ ազատագրական շարժման հետ առնչվող և հայ ժողովրդի ազատագրության բաղձանքներով ապրող անձնավորություն է։ Ի շարս այլ հարցերի, նշված վավերագրի հեղինակն ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ միավորված և հզորացած Վրաստանը կդառնա վերականգնված հայ թագավորության բնական դաշնակիցը։ «Եվ եթե բարեհաճեք այդ կատարել, ապա վրաց արքայի որդիներից մեկին արժանացրեք նրանց (հայերի—Վ. Մ.) վրա թագավոր դառնալուն, նրան տալով այն վայրերը, որոնց ...այժմ տիրում է վրաց արքան...»[22], կարդում ենք այդ ուշագրավ վավերագրում։

1785 թ. սեպտեմբերի 10-ին Հ. Արղությանը Շ. Շահամիրյանին իրազեկ է դարձնում Գեորգիևսկի դաշնագրի կնքմանը. «վրաց արքան՝ մեծն և քաջն Հերակլէս, միաւորեցաւ ընդ սոսա, ուստի և տիրուհին մեծ առաքեաց առ նա թագ թագաւորական՝ քարամբք զարդարեալ, գունդ, գաւազան, ծիրանի, սուր և վրան արքայական՝ զարդարեալ թագաւորական նշանօք, ընդ որս և երկու գունդ ի զօրաց իւրոց մնալ միշտ ի Վրաց տուն յաղագս պահպանութեան նոցա»[23]։ Տեղեկանալով այդ մասին, Շ. Շահամիրյանը Մադրասից 1787 թ. հոկտեմբերի 15-ին Հերակլ II-ին ծրագրային մի նամակ է հղում, ուր դարձյալ ընդգծում է հայ-վրացական դաշնակցության անհրաժեշտությունը՝ օտար լծից առհավետ ձերբազատվելու գործում։ Գեորգիևսկի դաշնագրի կնքումը «Շահամիրյանին ներշնչում է հույս, որ ահա մոտեցել է այն ժամը, երբ Հերակլն ունենալով ռուսական օգնությունը, կմիացնի հայերին ու վրացիներին և կստեղծի հայ-վրացական միացյալ պետություն»[24]։ Շ. Շահամիրյանը Հերակլ II-ին առաջարկելով իր ողջ պետության մեջ զանազան բարենորոգություններ և երկրի առաջընթացին նպաստող օրենքներ մտցնել, գրում է. «...ի օրինաց քոց փրկեսցի ազգն հայոց և վրաց ի ծառայութիւնէ բռնաւորաց»[25]։

Ոչ միայն ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչներն էին գործուն մասնակցում Գեորգիևսկի դաշնագրի կնքմանը կամ խորին գոհունակություն արտահայտում այդ առթիվ, այլև հայ արհեստավորներն ու առևտրականները նույնպես մեծ խանդավառություն ապրեցին այդ առթիվ։ Եթե նկատի առնենք մեծատաղանդ Պարույր Սևակի այն արդարացի կարծիքը,

---

22 А. А. Цагарели, նշվ. աշխ., էջ 358։

23 Ռ. Ա. Ասրահամյան, Շահամիր Շահամիրյանի նորահայտ նամակագրությունը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 3, էջ 149։

24 Հ. Ութմազյան, Վ. Հակոբյան, Հայ ազատագրական գաղափարների երկու կենտրոն և երկու ծրագիր XVIII դ. երկրորդ կեսին («Երևանի պետական համալսարանի ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու», 1941, № 3, էջ 125)։

25 Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար («Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ. XIII, 1940, էջ 42)։

որ «հայ ու վրաց ժողովուրդների դարավոր եղբայրությունը գնալով ավելի էր ամրապնդվում՝ ի տես այն մահացու վտանգների, որ սպառնում էին նրանց աջից ու ձախից» և որ «Վրաստանի հինավուրց մայրաքաղաք Թիֆլիսի 20.000 բնակչությունից 14.500-ը հայեր էին»[28], ապա անվարան կարող ենք պնդել, որ Գևորգիևսկի դաշնագրի կնքման և վավերացման առթիվ Թիֆլիսում կայացած ժողովրդական հանդիսություններին ակտիվորեն մասնակցել են նաև տեղի հայերը։ Ավելորդ չէ բերել Գևորգիևսկի դաշնագրի կնքման առթիվ Թիֆլիսում կայացած ժողովրդական ցնծության նկարագրությունը. «Վրաստանում գտնվող գնդապետ Բուրնաշևը ինձ հայտնում է,— գրել է Գ. Պոտյոմկինը,— որ գեներալ Պ. Ս. Պոտյոմկինի հետ դաշինք կնքելուց հետո վրաց դեսպանների վերադարձը Գեորգիևսկ ամրոցից անասելի բերկրանք և գոհունակություն է պատճառել Հերակլ արքային, որ այդ երկրի (Վրաստանի— Վ. Մ.) երևելի անձինք հատուկ հույսեր են փայփայում։ Իսկ ժողովուրդը օրհնում է Ձերդ կայսերական մեծության աջը, որ հաստատելու է նրանց համար անդորր և բարօրություն»[27]։ 1784 թ. հունվարի 22-ին Թիֆլիսում ժողովրդական հանդիսություններ են տեղի ունեցել նաև նշված դաշնագրի վավերացման հրովարտակները փոխանակելու առթիվ։ «Թիֆլիսի վաճառականները խնջույք էին անում, նվագում, երդում և պարում քաղաքի հրապարակում, ուր շատ ժողովուրդ էր հավաքվել։ Շատ տեղերում երաժշտություն էր հնչում, մի խոսքով ժողովուրդը կամենում էր իր բերկրանքն արտահայտել իր վիճակում այսչափ բարենպաստ փոփոխության առթիվ»[28],— գրում է գնդապետ Ս. Բուռնաշևը։

Այդպիսին էր վրաց ու հայ ժողովուրդների և նրանց առաջադեմ գործիչների վերաբերմունքը Գեորգիևսկի դաշնագրի նկատմամբ, դաշնագիր, որը «կտրուկ կերպով թուլացնում էր Իրանի և Թուրքիայի դիրքերը Անդրկովկասում»[29]։ Հենց այդ էր հիշյալ դաշնագրի հիմնական քաղաքական նշանակությունը, որն «օբյեկտիվորեն առաջադիմական երևույթ էր... կոչված... վերջ դնելու վրաց ժողովրդի ֆիզիկական ոչնչացմանը»[30]։ Լ. Ալեքսիձեի այս ճիշտ եզրակացությանը մենք կավելացնեինք նաև այն, որ Գևորգիևսկի դաշնագրի շնորհիվ ուժեղանում էր Ռուսաստանի ազդեցությունն Անդրկովկասում, հետևաբար, ավելի իրական էին դառնում թուրք-պարսկական լուծը թոթափելու հայ և վրաց ժողովուրդների ակնկալությունները։

Սակայն չէր նիրհում նաև հակառակ կողմը՝ Թուրքիան, որի «կառավարող շրջանները որոշեցին դիմել Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ֆեոդալների օգնությանը»[31], ռուսական ազդեցությունն Անդրկովկասում խարխլելու և իսպառ վերացնելու միտումով։ Թուրքական գործակալները կաշառքի, մեծամեծ խոստումների և ահաբեկումների միջոցով կամենում էին ամրապնդել «Թուրքիայի դիրքերը Կովկասում, այդ նպատակով օգտագոր-

---

26 Պարույր Սևակ, Սայաթ-Նովա, Երևան, 1961, էջ 130—131։

27 ՍՍՀՄ պետական կենտրոնական ռազմապատմական արխիվ, ֆ. 52, ց. 2, գ. 29, թ. 33։

28 Նույն տեղում, թ. 44։

29 О. П. Маркова, նշվ. աշխ., էջ 171։

30 Л. Алексидзе, Взаимоотношения Грузии с Россией в XVI—XVIII вв. (международно-правовое исследование) («Труды Тбилисского государственного университета», т. 94, Тбилиси, 1963, стр. 91).

31 «История СССР», т. III, М., 1967, стр. 647.

ծելով ադրբեջանական և դաղստանյան ֆեոդալներին, որոնք դժգոհությամբ էին նայում Արևելյան Վրաստանի ուժեղացման վրա[32]։ Ինչ խոսք, որ թուրքական կառավարող շրջանների սադրանքները խիստ բարդացրին իրադրությունն Անդրկովկասում։

Բազմաթիվ են այն անհերքելի փաստերը, որոնք աներկբայորեն վկայում են Խոյի Ահմեդ խանի, Շուշիի Իբրահիմ խանի, Դաղստանի Օմար խանի և այլոց հակառուսական քաղաքականությունը XVIII դ. 80-ական թվականներին։ Այսպես, 1785 թ. գարնանը ռուսական արքունիք հղած իր նամակում Հերակլ II-ը նշում էր, որ «Թուրքական արքունիքից ուղարկված դրամը արդեն բաժանված է Դաղստանի և Ադրբեջանի խաներին, որպեսզի մեր դեմ չարագործություններ անեն»[33]։ Նույն թվականի մայիսի 30-ին Ախալցիխեի Սուլեյման փաշայի (որը գործում էր թուրքական կառավարության ցուցումով) բանագնաց Սալամ աղա Ալիբեկը բանակցելով Գուրգեն Ենիկոլոփյանի հետ, հայտնել է հետևյալը. «Եթե արքան (Հերակլ II-ը—Վ. Մ.) կանսա մեր հորդորները և կհեռանա ռուսներից, ապա ես խոստանում եմ, որ արքան կստանա այն շնորհը, ինչ ցանկանում է։ Իսկ եթե չի ընդունի մեր առաջարկը, ապա հայտնեք արքային ճշմարտությունը, որ նրա դեմ պատերազմելու ենք»[34]։ Քարթլ-Կախեթի թագավորության նկատմամբ Թուրքիայի ոտնձգություններին անտարբեր չէին նայում հայ ազատագրական շարժման գործիչները, որոնք ջանքեր չէին խնայում ռուսական աջակցությամբ վնասազերծելու թուրքական սադրանքները։ Ահա թե այդ կապակցությամբ 1785 թ. սեպտեմբերին Հ. Արղությանն ինչ է գրում Հերակլ II-ին. «Մրրիկ կողմանցդ և յարուցմունք շրջաբնակ թշնամեացն Ձերոյ մեք լսելով ցաւակցիմք և առ բարձրեալն աղաչիմք, բարձր առնել զարքայական մեծութիւն Ձեր ի վերայ նոցա և միշտ յաղթող ի պատերազմի ի պարծանս նեղեալ աշխարհիդ և քրիստոնէութեան մերոյ։ Զպատկանելն առ այդ շփոթմունք ես գրեմ միշտ առ արքայորդին Ձեր (Միրիանը, որը գտնվում էր Պետերբուրգում—Վ. Մ.) և առ քնեազ Գարսևան և յորդորեմ զնոսա հետևող լինիլ օգտի աշխարհին իւրեանց...»[35]։ Այդ նամակում Հ. Արղությանը հաղորդում է մի խիստ տուշագրավ տեղեկություն ևս։ Ինչպես հայտնի է, XVIII դ. 80-ական թվականներին Արևելյան Հայաստանի ազատագրության խնդրով Պետերբուրգ էր մեկնել Երևանի հայ հասարակության ներկայացուցիչ Ս. Դավթյանը, նույն ինքը՝ Արարատյան դեսպանը, որը նույնպես իր ջանքերն ի սպաս էր դրել հօգուտ Վրաստանի։ Բերենք Հ. Արղությանի՝ մեր ասածը հավաստող համապատասխան վկայությունը։ 1786 թ. հունվարի 15-ին Աստրախանից Հերակլ II-ին ուղղած նամակում Հ. Արղությանը գրել է. «Երևանցի Ստեփանն մեծաւ հարազատութեամբ ջանայ վասն երկրիդ, ուր հարկն պատկանի, որպէս ի Ձէնջ առաքեցեալ ծառայ, յորմէ արքայաղունք (խոսքը Հերակլ II-ի որդիների՝ Անտոնի և Միրիանի մասին է—Վ. Մ.) և քնեազ Գարսևանն շնորհակալ են յոյժ»[36]։

Այսպիսով, հայ ազատագրական շարժման գործիչներն ինչպես Գեորգի-

---

32 О. П. Маркова, նշվ. աշխ., էջ 176։

33 Ռազմապատմական արխիվ, ֆ. 52, ց. 194, գ. 20, թ. 40։

34 Նույն տեղում, ց. 2, գ. 30, թ. 21։

35 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2699, թ. 45 բ։

36 Նույն տեղում, թ. 58 բ։

Լսկի դաշնագրի նախապատրաստման շրջանում, այնպես էլ հետագայում, մեծ ուշադրությամբ հետևում էին Քարթլ-Կախեթի թագավորության քաղաքական կացությանը, մշտապես գործելով վրաց առաջադեմ գործիչներին համահնչուն։ Այդ իսկ պատճառով մենք ամենայն իրավամբ կարող ենք Գեորգիևսկի դաշնագրի կողմնակիցներին, ակադ. Ն. Բերձենիշվիլու տված գնահատականը վերագրել նաև հայ գործիչներին. «...այն ամենը, որ առաջադիմական էր վրաց ֆեոդալական հասարակության մեջ, Հերակլի և նրա համախոհների կողմից էին մարտնչում, այն ամենը, ինչ հետադիմական էր, Հերակլի դեմ էր։

Վրասանի կամավոր անցումը Ռուսաստանի հովանավորության ներքո, 1783 թ. իրադարձությունն առաջադիմության ուժերի դարակազմիկ հաղթանակն էր»[37]։

Բերված փաստերը միաժամանակ հիմք են տալիս եզրակացնելու, որ Գեորգիևսկի դաշնագիրը նաև հայ և վրաց ազատագրական շարժման գործիչների համատեղ ջանքերի արգասիքն էր։

ГЕОРГИЕВСКИЙ ТРАКТАТ 1783 г. И АРМЯНЕ

ВАГРАМ МАРТИРОСЯН

Резюме

24 июня 1783 г. в крепости Георгиевск был заключен дружественный договор между Картл-Кахетинским царством и Российской империей, по которому восточно-грузинское царство переходило под покровительство России. Известный деятель армянского освободительного движения Иосиф Аргутинский принимал активное участие в заключении указанного договора, считая, что укрепление русского влияния в Закавказье откроет реальные перспективы освобождения Армении из-под чужеземного ига и восстановления армянской государственности.

Активными сторонниками сближения с Россией были также проживавшие в Грузии армяне, видные представители которых входили в правящую верхушку, поддерживавшую прогрессивную политику Ираклия II.

Вместе с грузинским народом армяне радушно восприняли заключение Георгиевского договора как прогрессивное событие, осознавая, что оно будет способствовать также освобождению Армении от господства турецко-персидских поработителей.

---

[37] ნ. ბერძენიშვილი, ქართული ისტორიოგრაფიის განვითარების მთავარი ხაზი, ქართული ისტორიოგრაფია, III, თბ., 1975, *էջ 137։*